



Հաղորդագրութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ՀԵՌՈՒՄԻ ՄԼԱՑԷՔ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՌԱԿՏԵԼՈՒ ԱԶԳԱԿՈՐԾԱՆ ՓՈՐՁԵՐԵՆ

Անցնող ամիսներուն, խոր մտահոգութեամբ հետեւեցանք Սուրբ Էջմիածինի շուրջ տեղի ունեցող մտահոգիչ զարգացումներուն: Չանագան առիթներով ու միջոցներով փորձեցինք հանդարտեցնել փոթորկալից կացութիւնը եւ փոխադարձ հասկացողութեան մղել՝ յատկապէս զգուշացնելով եկեղեցին պառակտելու առաջնորդող քայլերէ:

Այսօր, փաստօրէն, կացութիւնը դարձած է անելի վտանգալից՝ աննախատեսելի հետեւանքներով յի: Սուրբ Էջմիածինի եւ ընդհանրապէս մեր եկեղեցւոյ ամբողջականութեան ու ներքին միութեան ամուր պահպանումը եւ զայն ներքին թէ արտաքին վտանգներէ հեռու պահելը համազգային առաջնահերթութիւն է: Այս խոր գիտակցութենէ ու յանձնառութենէ առաջնորդուած, կոչ կ'ուղղենք՝

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ՝ հեռու մնալու Սուրբ Էջմիածինի ներքին կեանքին ու խնդիրներուն միջամուխ դառնալու եւ եկեղեցիէն ներս զանազան միջոցներով պառակտումի սերմեր ցանելու հակասահմանադրական եւ, հետեւաբար, անընդունելի ու դատապարտելի քայլերէ, որոնք կրնան մեր եկեղեցին, ազգն ու Հայրենիքը առաջնորդել ինքնակործանումի:

- ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԻ՝ կարելի փութով, համբերութեամբ ու խոհեմութեամբ առաջը առնելու միաբանական կեանքէն ներս ճեղքեր յառաջանալու ու յառաջացնելու վտանգաւոր կացութիւններուն եւ համախմբուելու Վեհափառ Հայրապետին, ինչպէս նաեւ միաբանական ուխտին ու սկզբունքներուն շուրջ եւ եղբայրական ոգիով, կանոնական գործընթացով ու իրապաշտ մօտեցումով քննելու առկայ խնդիրները՝ համապատասխան որոշումներ գոյացնելու վճռականութեամբ:

Եկեղեցին Աստուծոյ տունն է ու միաժամանակ՝ ազգին սրբազան տունը: Իւրաքանչիւր հայ պարտաւորութիւն ու իրաւունք ունի մտահոգուելու եւ տեսակետ յայտնելու եկեղեցին յուզող խնդիրներու նկատմամբ, սակայն՝ կառուցողական ու շինիչ մօտեցումով եւ եկեղեցին վերանորոգելու ու անոր ծառայական առաքելութիւնը անելի կենսագործելու նախանձախնդրութենէ առաջնորդուած:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ